ՀԱՅ - ՎՐԱՑԱԿԱՆ ԿՆՃԻՌԸ

Գրեց՝ Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ԲԱՐԵՄԻՏ լինենք բացատրելու վիրահայ ազգային փոքրամասնութեան դէմ ուղղուած անագորոյն հալածանքները «պատերազմական անհրաժեշտութեամբ», ինչպէս այդ սիրում էին անել Վրաստանի ղեկավարները մի ժամանակ: Այսինքն՝ ընդունենք, թէ արդար էին նրանք, երբ ասում էին, թէ հայ-վրացական պատերազմի օրերին, Վրաստանի հայ ժողովուրդը կամ նրա որոշ հատուածները թշնամական դիրք էին բռնել վրաց զօրքի եւ կառավարութեան հանդէպ՝ հարկադրելով վերջինիս զսպիչ միջոցներ ձեռք առնել այս «դաւաճանական» ընթացքի դէմ՝ պետութիւնը պաշտպանելու եւ պատերազմական գործողութիւնների յաջողութիւնը ապահովելու համար: Կրկնում ենք, ընդունենք մի բոպէ այս մեղադրանքի ճշմարտութիւնը, թէեւ, ինչպէս կը տեսնենք յետոյ, քարերն իսկ աղաղակում են սրա դէմ:

Արդ, եթէ «պատերազմական անհրաժեշտութիւնն» էր կազմում հակահայկական հալածանքների հիմքն ու պատճառը, հասկանալի է, որ պատերազմի վերջանալուն պէս, Վրաստանի հայութեան դէմ ուղղուած խստութիւններն էլ պէտք է դադարէին: Բայց իրականի մէջ ի՞նչ ենք տեսնում. այն, որ այդ խստութիւնները իրենց դագաթնակէտին են հասնում հէնց այն ժամանակ, երբ թշնամական գործողութիւններն խսպառ դադարել էին, եւ նրանց վերարծարծման համար ոեւէ նշան չկար:

Հայ-վրացական պատերազմը, ինչպէս գիտենք, վերջացաւ 1918-ի Դեկտեմբեր 31-ի գիշերը՝ նախօրօք մշակուած զինադադարի պայմանի համաձայն՝ եւ այդ վայրկեանից սկսած, մի հատիկ գնդակ չէ արձակուել ոչ այս ոչ այն կողմից: Նոր Տարուայ առթիւ ոչ մի պարգեւ չէր կարող այնքան մեծ արժէք ունենալ հայ եւ վրացի ժողովուրդների համար, որքան այս զինադադարը:

Առանձնապէս մեծ էր ուրախութիւնը Վրաստանում ապրող հայութեան, որին այդ չարաշուք պատերազմը կռանի եւ սալի արանքում էր դրել: Եւ ահա զինադադարից հինգ օր անց, երբ կրքերը երկուստեք զգալի կերպով մեղմացել էին, եւ ամէնքը կարծում էին, թէ չատ հեռու չեն այն օրերը, երբ որ, համաձայն Ժորդանիայի գուշակութեան կամ ցանկութեան, «վրացիների ու հայերի միջեւ, Վրաստանի եւ Հայաստանի հանրապետութիւնների միջեւ պէտք է առյաւէտ հաստատուեն իրաւական եւ խաղաղ յարաբերութիւններ», Թիֆլիսում բռնկում են հակահայկական հալածանքներն այնպիսի ուժգին թափով, որ մոռացնել են տալիս նախորդ չարաթների բոլոր սարսափները...

Վիրահայոց Ազգային Խորհուրդը, վերեւ յիշուած յուշագրի մէջ (8 Յունուար, 1928), հետեւեալն է գրում Թիֆլիսում այդ օրը տեղի ունեցած դէպքերի մասին.

«Կիրակի, Յունուար 5-ին,... միլիցիայի պաշտօնեաները, իբրեւ զինուած վայրենիներ, բառի բուն նշանակութեամբ որս էին կազմակերպել հայերի դէմ: Մի քանի ժամուայ ընթացքում, նրանք ձերբակալեցին մօտ 6000 մարդ: Սրանցից ազատ ձգուեցին մի քանի հարիւր բախտաւորներ միայն, որոնք ի վիճակի էին, հէնց տեղն ու տեղը, ամէնքի աչքի առաջ, հրապարակային նուազուրդ կատարելով, վճարել պահանջուած փրկագինը, կամ որոնց հնարաւորութիւն տրուեց միլիցիոներների ուղեկցութեամբ գնալ տուն եւ այնտեղ, աւելի եւս մեծ գումար վճարելով, ազատուել բռնաւորներից»:

Նոյն դէպքերի, ինչպէս եւ յետագայ իրադարձութիւնների մասին Վրաստանի մեր դեսպանութեան Տեղեկատու Բիւրոն հաղորդագրում է.

«Յունուար 5-ին, երբ միլիցիոներները որսում էին հայերին, Թիֆլիսի փողոցները մղձաւանջային պատկեր էին ներկայացնում բառիս բուն իմաստով: Ամբողջ շրջաններ